Հաստատում եմ՝

Ռուս-Հայկական համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր փ.գ.դ., պրոֆեսոր

Պ.Ս. Ավետիսյան

05.02. 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Բագրատ Սերգեյի Բագրատյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հաստատվել է

Ռուս-Հայկական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի 2026թ.-ի փետրվարի 4-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, ավագ դասախոս Ն.Ի. Մարգարյանը, ավագ դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Ազգային անվտանգության քաղաքականության և համակարգի ձևավորումը և զարգացումը յուրաքանչյուր պետության առաջնահերթ հիմնահարցերից են: 21-րդ դարում «անվտանգություն» ինստիտուտն իր ուրույն նշանակությունն ունի գրեթե բոլոր պետությունների ազգային արժեքների ապահովման դոկտրիններում: Չնայած այն հանգամանքին, որ դարաշրջանը հակված է դեպի գլոբալացում, համընդհանուր արժեքների ձևավորում, այնուամենայնիվ, ազգային անվտանգության համակարգի

ձևավորումը, հստակեցումը յուրաքանչյուր պետության շահերի, ազգային արժեքների պաշտպանության, ինչպես նաև տնտեսական զարգացման համար էական և առաջնային դեր ունի:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունն ազգային անվտանգությունը սահմանում է որպես մի վիճակ, որի դեպքում ապահովված են անձի, հասարակության և պետության իրավունքը, ազատությունը և անվտանգությունը, ինչպես նաև երաշխավորում է նրանց հաջող փոխկապված համակարգային զարգացումը: ՀՀ ազգային անվտանգության՝ արդի շրջանի հավելյալ մարտահրավերն են սոցիալ-քաղաքական արդարության արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, մասնագիտական կրթության, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը, հասարակության շրջանում որոշակի անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը և այլն:

Ազգային անվտանգության ապահովման գործողությունները հաճախ ներկայացվում են որպես քաղաքական համակարգի գործառութային բաղադրիչներ, որոնք ամբողջական ընդգրկմամբ մշակվում են և ներկայացվում են ազգային անվտանգության հայեցակարգային հիմնական փաստաթղթերում՝ ռազմավարությունում: Ազգային անվտանգության երաշխավորման կառուցակարգի այդ բաղադրիչները քննարկելիս և սահմանելիս մասնագետները ելնում են ժամանակակից պայմաններում պետության ու հասարակության գործունեության վրա ազդող բոլոր գործոնների հանրագումարային վերլուծությունից: Վերոնշյալ և մի շարք այլ առումներով պայմանավորված՝ ատենախոսության հեղինակի կողմից առաջ քաշված թեման, որը նվիրված է ՀՀ անվտանգային քաղաքականության հայեցակարգային հիմնախնդիրների համընդգրկուն գնահատմանը, ձեռք է բերում օրակարգային կարևոր գիտատեսական և գիտագործնական նշանակություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ութ ենթագլուխներով, եզրակացություններից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, ատենախոսության ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, աղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է **«Ազգային անվտանգության քաղաքականության և դրա իրականացման տեսական-մեթոդաբանական հիմնահարցերը»** և ներառում է երեք ենթագլուխ: Այս գլխում հեղինակը արդարացիորեն ընդգծում է, որ ազգային, տարածաշրջանային, միջազգային մակարդակներով անվտանգությունը իրենից ներկայացնում է օբյեկտիվ և սուբյեկտիվ ներգործության ենթակա համակարգեր: Արդի ժամանակաշրջանում ի հայտ են գալիս մի շարք նոր վտանգներ ու սպառնալիքներ, որոնց համարժեք պատասխանները, կարելի է ասել, դեռևս լիարժեք մշակված չեն: Պետությունները և միջազգային հանրությունը պետք է հետևողական ջանքեր գործադրեն անվտանգության քաղաքականության երաշխավորման նոր ճանապարհներ ու միջոցներ գտնելու համար, հետևապես՝ անհրաժեշտ է քաղաքականության մեջ ճիշտ ժամանակին հաշվի առնել և վերլուծել անվտանգության դեմ ուղղված արտաքին ու ներքին սպառնալիքներրը:

Երկրորդ՝ **«Ազգային անվտանգության քաղաքականության հենքային երաշխավորումը Հայաստանի Հանրապետությունում»** վերնագրով գլուխը, վերաբերված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթավորման արդի հիմնախնդիրներին՝ փորձ անելով գնահատել արտաքին անվտանգության քաղաքականության ռազմավարական տեսլականը: Ինտեգրացիոն գործընթացները Հարավկովկասյան տարածաշրջանում ներկայումս ընդգծված ակտիվ փուլում են, արդի նոր զարգացումներ են նկատվում, որոնցից անմասն չի կարող մնալ նաև Հայաստանի Հանրապետությունը: Հատկապես վերջին տարիների զարգացումներում պաշտոնական Երևանը հիմնական շեշտադրումները կատարում է ինտեգրացիոն քաղաքականության զարգացման վրա, փոխլրացման տրամաբանությամբ փորձ է արվում զարգացնելու համագործակցությունը տարածաշրջանային, եվրոպական և եվրատլանտյան ինտեգրացիոն հարթակների հետ:

Երրորդ գլուխը վերնագրված է «**Ազգային անվտանգության քաղաքականության ռազմավարական երաշխավորման ներպետական համակարգը**» վերնագրով և կազմված է երկու ենթագլխից: Ազգային անվտանգության ապահովումն անհրաժեշտ է դիտարկել որպես միասնական համակարգային գործընթաց, որի առանձին բաղադրիչների իրականացման հիմքում պետք է ընկած լինի անվտանգության ռազմավարական նպատակների իրագործմանը նպաստելու սկզբունքը: Ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունը, որպես կանոն, իր արտացոլումն է գտնում կենսագործունեության կոնկրետ ոլորտներում անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման այն նպատակային, համակարգված ծրագրերում, որոնք մշակում է պետությունը: Այս համատեքստում առանձնացված վերլուծվում է անվտանգության խորհուրդը՝ որպես անվտանգային քաղաքականության համակարգման վերգերատեսչական պետական հաստատություն, ուսումնասիրվում են արտասահմանյան մի շարք երկրում այդ մարմնի կարգավիճակային ու գործառնական առանձնահատկությունները, նախանշվում են Հայաստանում տվյալ մարմնի զարգացման հնարավորությունները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների հետազոտման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, այն հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ուսումնասիրելով ՀՀ ազգային անվտանգության քաղաքականությանը վերաբերվող իրավաքաղաքական դաշտը, համապատասխան փաստաթղթեր, ծավալուն մասնագիտական գրականություն ու սկզբնաղբյուրներ՝ հեղինակը կարողացել է արդի մարտահրավերներից ելնելով վերլուծության ենթարկել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության երաշխավորման հայեցակարգային հիմքերը՝ առանձնացնելով այդ քաղաքականության վրա ազդող դրական ու բացասական մի շարք ասպեկտներ:

Բագրատ Բագրատյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, սակայն, զերծ չէ նաև որոշակի բացերից: Մասնավորապես.

1. Հետազոտության առաջին գլխում իրավացիորեն ընդգծվում է, որ ազգային անվտանգության քաղաքականությունը երաշխավորում է երկարաժամկետ կայունությունը և ՀՀ-ի՝ հնարավոր իրավիճակներին ու դրանց փոփոխություններին հարմարվողականությունը: Այս համատեքստում կարևոր է առավել մանրամասն կենտրոնանալ հետևյալ հիմնախնդրին. հնարավորություն տալ պետությանը հարմարվելու փոփոխվող աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական, ռազմական ռազմավարական, տեխնոլոգիական և այլն միջավայրերին՝ ներառելով և կիրարկելով ռիսկերի գնահատման, կանխատեսման և պարբերական վերանայման մեխանիզմները: Այս և նմանատիպ կանխատեսումների ու գնահատումների համապարփակ վերլուծությանը կարելի էր առանձին ենթագլխով անդրադառնալ անվտանգային քաղաքականության շրջանակներում պետության զսպման կարողությունների հետազոտությամբ:

2. Ատենախոսության տարբեր հատվածներում (հատկապես՝ 3-րդ գլխի առաջին ենթագլխում) ուսումնասիրվում են ՀՀ անվտանգային քաղաքականության ներքին, պետաիշխանական գործառնական ասպեկտները, սակայն հիմնականում կենտրոնանալով գործադիր իշխանության ընդհանուր և ոլորտային աշխատանքների մասով: Գտնում ենք, որ հարկ էր նաև գնահատել իշխանության օրենսդիր ու դատական թևերի գործունեությունն ազգային անվտանգության երաշխավորման ուղղվածությամբ, ինչպես նաև ՀՀ Նախագահի կարգավիճակային արդի տեսագործնական հիմնահարցերը:

3. Ի հավելումն նախորդ կետի՝ աշխատանքի առաջարկությունների վերջին մասում անդրադարձ է կատարվում ՀՀ Անվտանգության խորհրդի ինստիտուցիոնալ և դրա գրասենյակի աշխատակարգային հնարավորությունների զարգացմանը, հիմնականում հենվելով արտասահմանյան մի շարք երկրների առաջավոր փորձի վրա: Ներկայացված առաջարկությունները ավելի կիրառական հիմնավորվածություն կստանային Հայաստանում կառավարման մոդելների ու անվտանգային քաղաքականության փոփոխությունների առավել մանրամասն վերլուծությունների համադրման դեպքում:

4. ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության վերանայման գործընթացում կարելի էր նաև գիտավերլուծական հենքով առանձնացնել առաջիկա սահմանադրական

բարեփոխումների ու անվտանգային կերպափոխումների փոխկապակցված ժամանակահատվածները կամ փուլերը: Աշխատանքում ներկայացված ծավալուն հետազոտության գործառնական նշանակությունը կընդգծվեր հանրապետությունում կանխատեսվող անվտանգային ռազմավարական վերափոխումների հաջորդական տրամաբանության շեշտադրմամբ:

5. Ատենախոսությունում հանդիպում են նաև ձևակերպական, ոճաբանական անճշտություններ ու բացեր, ներառյալ՝ բավականին երկար շարադրանքով նախադասությունները, գրականության աղբյուրներում նորմատիվ իրավական ակտերի ոչ կոնկրետացված էլեկտրոնային հասցեները և այլն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ատենախոսությունը խիստ արդիական թեմայով համակարգված և համալիր ուսումնասիրություն է, փաստենք, որ վերոհիշյալ դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի ո՛չ գիտական, ո՛չ էլ կիրառական արժեքները:

Բագրատ Բագրատյանը կատարել է իր առջև դրված խնդիրներն ու նպատակները, ատենախոսությունում առկա են համապատասխան եզրահանգումներ և առաջարկներ, որոնք ունեն տեսական և կիրառական նշանակություն, ինչպես նաև հիմնավորված է ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքը գրված է գիտական լեզվով, հետազոտվող նյութը փաստարկված է, իսկ հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության մեջ ներկայացված գիտատեսական և գործնական եզրահանգումները:

Թեմայի արդիականությունը և հիմնավորված եզրահանգումները, առաջարկությունները, ինչպես նաև ուսումնասիրության համար ընտրված շրջանակներն ու արդյունքները հնարավորություն են տալիս փաստելու, որ Բագրատ Սերգեյի Բագրատյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին և այն երաշխավորում է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական

ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ռուս-Հայկական համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ.Ս. Կասաբաբովա